

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Նոր Կեսարիա համայնքի ղեկավար՝ Հրայր Գալստյանի 2015 թ. առաջին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների մասին:

Հարգելի համագյուղացիներ, ավագանու անդամներ, հյուրեր Ձեզ եմ ներկայացնում 2015 թ. առաջին կիսամյակի ընթացքում ընթացքում իմ կողմից Նոր Կեսարիա համայնքում կատարած աշխատանքների և բյուջեյի կատարման մասին հաշվետվություն :

Նոր Կեսարիա համայնքը կազմված է 270 տնային տնտեսությունից և ունի 1630 բնակիչ:

Ղեկավարվելով “Տեղական ինքնակառավարման մասին” և “Համայնքային ծառայության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքներով, ենթաօրենսդրական ակտերով, համայնքի ավագանու և գյուղապետարանի կանոնադրությամբ և ընդունված որոշումներով համայնքի ՏԻՄ մարմինները իրենց գործունեությունը 2015 թ. առաջին կիսամյակի ընթացքում հիմնականում նպատակաուղղել են համայնքի բնակչության հոգսերի և խնդիրների լուծմանը, ինչպես նաև համայնքում առկա սոցյալ տնտեսական խնդիրների որոշման և բարելավման հարցերին:

Չնայած 2015թ. առաջին կիսամյակի ընթացքում համայնքում չի ներդրվել որևէ խոշորամասշտաբ ծրագիր և համայնքին չի ցուցաբերվել համապատասխան աջակցություն համայնքում առկա հիմնախնդիրների լուծմանը, որոնք նախատեսված էին համայնքի սոցյալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրով, այնուամենայնիվ համայնքի բյուջեյի տնտեսված միջոցներով կատարվել են մի շարք աշխատանքներ:

2015 թ. առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեյի միջոցներից համայնքի անապահով ընտանիքներին հատկացվել է սոց օգնություն : Հունվարի 6-ին համայնքի Սուրբ Բարսեղ Կեսարացի եկեղեցում տեղի ունեցել սուրբ պատարագ :

Մարտի 8-ին դպրոցում տեղի է ունեցել միջոցառում նվիրված մայրության և գեղեցկության օրվան , համայնքի ղեկավարի կողմից տրվեցին նվերներ և ծաղիկներ , իսկ համայնքի մյուս կանանց բաժանվեցին ծաղիկներ :

Համայնքի ղեկավարի առաջարկությամբ և ավագանու որոշմամբ դպրոցին նվիրաբերվել է գույք :

Ապրիլի ամսին Սուրբ Ջատիկի տոնի կապակցությամբ մեծ շուքով նշվեց Քրիստոսի հարության տոնը :

Հայոց Մեծ Եղեռնի 100 ամյակին նվիրված համայնքում տեղի ունեցավ մեծ միջոցառում «<Հիշում եմ և պահանջում >> խորագրով , մասնակցեցին գյուղի հասարակության մեծ մասը, ողջ երիտասարդությունը , դպրոցի ուսուցչական կոլեկտիվը աշակերտների հետ միասին դպրոցից երթով դեպի հուշարձան , որտեղ տեղի ունեցավ մոմավառություն , իսկ Սուրբ Բարսեղ Կեսարացի եկեղեցում տեղի ունեցավ պատարագ :

Մայիսի 8-ին տեղի ունեցավ Հայրենական Մեծ պատերազմի և Շուշիի ազատագրման օրվան նվիրված մեծ միջոցառում , որին ներկա է եղել նաև ՀՀ Արմավիրի մարզպետը : Կատարվեց հուշանվերների հանձնում Նոր Կեսարիա համայնքի Հայրենական Պատերազմի մասնակիցներին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին, Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության և Լեռնային Ղարաբաղի Ազատագրման մարտերի մասնակիցներին և հաշմանդամներին :

Տեղի ունեցավ տոնական համերգ և տոնական ճաշկերույթ :

Մայիսի 24-ին դպրոցում տեղի ունեցավ Վերջին զանգին նվիրված միջոցառումը , որի ընթացքում դպրոցի շրջանավարտներին շնորհավորեց և նվերներ հանձնեց համայնքի ղեկավարը :

Համայնքի ղեկավարի աջակցությամբ և նրա մասնակցությամբ Նոր Կեսարիա համայնքի պարի խմբակի երեխաները մեկնել են Վրաստան՝ Քոբուլեթի պարային մրցույթի և գրավել են 1-ին տեղը :

Գյուղը գազաֆիկացված է , գործում է ակումբ - գրադարանը, գործում է նաև բուժ ամբուլատորիան , չունենք միայն մսուր – մանկապարտեզ :

Կատարվել են գիշերային լույսերի կառուցման և վերանորոգման աշխատանքներ , հուշարձանի հարակից տարածքի բարեկարգում , մշակույթի տան մասնակի վերանորոգում :

Առկա է 3 առևտրի սրահ և 2 դեղատուն , որը ապահովում է բնակչության առօրյա կարիքները:

Համայնքում լուրջ հիմնախնդիր է համարվում բնակչության զբաղվածության ապահովումը, գյուղում չի գործում որևէ արտադրամաս :

2015 թ . առաջին կիսամյակի ընթացքում եղել է 22 ծնունդ: Գյուղում գործում է մեկ միջնակարգ դպրոց՝ թվով 183 աշակերտ, 1-ին դասարանում առկա է 16 , իսկ ավարտական դասարանում՝ 18 աշակերտ: Դպրոցում ընդգրկված են 33 աշխատողներ: Համեմատած բարվոք վիճակում է գյուղի բուժ-ամբուլատոր կետը, որում աշխատում է 1 բուժքույր: Գյուղապետարանի աշխատողները բաղկացած են 13 հոգուց : Բնակչության մեծամասնությունը զբաղված է անասնապահությամբ և հողագործությամբ:

Գյուղատնտեսական աշխատանքների աջակցելու նպատակով համայնք է ներկրվել ազոտական պարարտանյութ , դիզ. վառելիք և մատչելի գներով տրամադրվել է համայնքի

ազգաբնակչությանը: Կատարվել են աշխատանքներ ոռոգման ջրի հիմնախնդիրների լուծման գործում և դրա շնորհիվ կատարվում է ոռոգման ջրի լավ սպասարկում :

Նախատեսված է 2015 թ. երկրորդ կիսամյակում մինչև գերեզմանատուն ջրագծի կառուցում :

Ելնելով կատարված աշխատանքներից և առկա բացթողումներից հավաստիացնում են համայնքի բնակչությանը, համայնքի ավագանուն, որ 2015 թ. ընթացքում անհրաժեշտ միջոցներ կձեռնարկվեն համայնքում առկա հիմնախնդիրների լուծման, բյուջեյի սեփական եկամուտների ապահովման գյուղապետարանի աշխատակազմի աշխատանքների բարելավման և պատասխանատվության բարձրացման ուղղությամբ :

1. Գյուղի գլխավոր հիմնախնդիրներից մեկն է խմելու ջրի ներտնտեսային ցանցի ոչ բարվոք վիճակը :
2. Մտուր մանկապարտեզի բացակայությունը :
3. Մշակույթի տան լրիվ վերանորոգման հարցը :

ՆՈՐ ԿԵՍԱՐԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Հ. ԳԱԼՍՅԱՆ